ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՏԿԵՆ-ՄԱ-ԾՁԲ-2021/7Ծ

ք. Երևան «19» 02 2021թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Հ. Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մանվել Ջալավյան» Ա/Ձ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Մ. Ջալավյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է էլեկտրական սարքերի, սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է **350 000 (երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,

որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3, ՀՀ կենտրոնական գանձապետարան ՀՎՀՀ 02815457 ՀՀ 900011018513 գլխավոր քարտուղար Հ.Բաղդիկյան _____ (ստորագրություն) Կ.Տ.	<<Մանվել Ջալավյան>> Ա/Ձ ՀՀ, Ք.Երևան Նոր նորք Գալշոյան փ 19շ 12բն Գործ. հասցե ք. Երևան Մոսկովյան 25 3/1տ. «Ինեկո բանկ» ՓԲԸ ՀՀ 2050032155921001 ՀՎՀՀ 82934656 տնօրեն՝ Մ. Ջալավյան _____ (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
« 19 » « 02» 2021թ. կնքված
ՏԿԵՆ-ՄԱ-ԾՁԲ-2021/7Ծ ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	50531200/1	Ստորև	դրամ	350,000 /երեք հարյուր հիսուն հազար/	1	ՀՀք.Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը կնքելու օրվանից սկսած մինչև 25.12.2021թ. Ըստ պահանջի

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

Էլեկտրական սարքերի, սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայությունների շրջանակում նախատեսվում է իրականացնել համակարգիչների, անխափան սնուցման սարքերի, լազերային տպիչ և պատճենահանող սարքերի նորոգում և սպասարկում.

ԳՆԱՑՈՒՑԱԿ

Ծառայությունների անվանումը	**Ծառայության միավորի առավելագույն գինը /ՀՀ դրամ/**
Համակարգիչների վերանորոգման և պահպանման ծառայություն	
Համակարգչի պրոֆիլակտիկա	2 000
Վիրուսներից վնասված համակարգչի աշխատունակության վերականգնում	3 000
Համակարգչային պահարանի հովացուցիչի փոխարինում ներառյալ Cooler	1 000
Մայրական տպասալի նորոգում	5 000
Սնուցման բլոկի նորոգում	3 000
Մայրական տպասալի փոխարինում ներառյալ Ինտել LGA 775/945/G31/G4 1/H61/H81 /H110/1150/1155/B75/1155 չիպսեթ	37 000
RAM-ի փոխարինում ներառյալ ԴԴՌ2 1ԳԲ 800ՄՀՑ (DDR2 1GB 667/800MHZ)	4 500
RAM-ի փոխարինում ներառյալ ԴԴՌ2 2ԳԲ 800ՄՀՑ (DDR2 2GB 667/800MHZ)	8 700
RAM-ի փոխարինում ներառյալ ԴԴՌ3 2ԳԲ 1333ՄՀՑ (DDR3 2GB 1333MHZ)	7 500
RAM-ի փոխարինում ներառյալ ԴԴՌ3 4ԳԲ 1333ՄՀՑ (DDR3 4GB 1333/1600MHZ)	15 000
RAM-ի փոխարինում ներառյալ ԴԴՌ3 8ԳԲ 1333ՄՀՑ (DDR3 8GB 1333/1600MHZ)	24 000
RAM-ի փոխարինում ներառյալ ԴԴՌ4 4ԳԲ 1333ՄՀՑ (DDR4 4GB 1333/1600MHZ)	16 000
RAM-ի փոխարինում ներառյալ ԴԴՌ4 8ԳԲ 1333ՄՀՑ (DDR4 8GB 1333/1600MHZ)	24 000
HDD-ի փոխարինում ներառյալ ՀԴԴ 500ԳԲ ՍԱՏԱ/7200 (HDD 500GB SATA/7200)	22 000
HDD-ի փոխարինում ներառյալ ՀԴԴ 1024Բ ՍԱՏԱ/7200 (HDD 1SB	28 000

SATA/7200)	
SSD-ի տեղադրում 120GB ներառյալ SSD-ն	15 000
SSD-ի տեղադրում 240GB ներառյալ SSD-ն	25 000
SSD-ի տեղադրում 500GB ներառյալ SSD-ն	48 000
SVGA փոխարինում ներառյալ Ատի Ռադեոն/Նվիդիա ԴԴՌ3 2Գբ ՊիԻիԱյ-Էքսպ (nvidia, Ati Redeon/Nvidia DDR3 2Gb PCI Exp) կամ համարժեք	25 000
DWD RW-ի տեղադրում ներառյալ DWD RW-ն	8 500
Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ սնուցման բլոկ Պ4 պահարանի համար 450վ (Power suply 450W)	8 000
Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ սնուցման բլոկ Պ4 պահարանի համար 550վ (Power suply 550W)	9 300
Ցանցային քարտի տեղադրում ներառյալ ցանցային քարտ 10/100 Դ-լինկ (D-link 10/100)	3 500
Ցանցային քարտի տեղադրում ներառյալ ցանցային քարտ 10/100/1000 Դ-լինկ (D-link 10/100/1000)	7 000
Մոնիտորի	
Մոնիտորի նորոգում ներառյալ պահեստամասերը 17" (լամպ, ինվերտոր, մատրիցա, սնուցման բլոկ, մայրական տպասալ կամ անհրաժեշտ այլ պահեստամաս)	8 000
Մոնիտորի նորոգում ներառյալ պահեստամասերը 19" (լամպ, ինվերտոր, մատրիցա, սնուցման բլոկ, մայրական տպասալ կամ անհրաժեշտ այլ պահեստամաս)	11 000
Մոնիտորի նորոգում ներառյալ պահեստամասերը 20"-22" (լամպ, ինվերտոր, մատրիցա, սնուցման բլոկ, մայրական տպասալ կամ անհրաժեշտ այլ պահեստամաս)	16 000
Անխափան սնուցման սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություն	
Ղեկավարող սալիկի վերանորոգում (ներառյալ պահեստամասերը)	4 000
Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12Վ 7Ա	9 000
Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12Վ 9Ա	12 500
Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12Վ 12Ա	15 000
Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12Վ 18Ա	26 000
Լազերային տպիչ և պատճենահանող սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություն	
Լազերային տպիչի	
Դիագնոստիկա սև և գունավոր, Պրոֆիլակտիկա սև և գունավոր	6 000
Վերանորոգում սև կամ գունավոր (ներառյալ պահեստամասերը՝ տպասալ, ատամնանիվ, ջերմատաքացուցիչ, մեխանիկական դետալներ) չվերանորոգման դեպքում փոխարինում նորով	13 000
Լազերային տպիչի քարթրիջի լիցքավորում ներառյալ համապատասխան տոները և չիպը HP 12A / 49A / 53A / 05A / EP26 / EP27 / 737 / 17A / 83A / 19A /Pantum PC 211 կամ համարժեք	3 000
Լազերային տպիչի քարթրիջի թմբուկի փոխարինում ներառյալ թմբուկը 12A / 49A / 53A / 05A / EP26 / EP27 / 737 / 83A / 17A / 19A / Pantum PC 211 կամ համարժեք	3 000
Լազերային տպիչի քարթրիջի կարատրոնի փոխարինում ներառյալ կարատրոնը 12A / 49A / 53A / 05A / EP26 / EP27 / 737 / 83A / 17A / 19A / Pantum PC 211 կամ համարժեք	1 500
Լազերային տպիչի քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում ներառյալ մագնիսական լիսեռը 12A / 49A / 53A / 05A / EP26 / EP27 / 737 83A / 17A / 19A/ Pantum PC 211 կամ համարժեք	1 700
Լազերային տպիչի քարթրիջի քարթրիջի չափիչ դանակի փոխարինում ներառյալ չափիչ դանակը 12A / 49A / 53A / 05A / EP26 / EP27 / 737 / 17A 83A / 19A / Pantum PC 211 կամ համարժեք	1 400
Լազերային տպիչի քարթրիջի քարթրիջի մաքրող դանակի փոխարինում ներառյալ մաքրող դանակը 12A / 49A / 53A / 05A / EP26 / EP27 / 737 / 83A / 17A / 19A / Pantum PC 211 կամ համարժեք	1 200
Լազերային տպիչների վառարանի թերմոժապավենի փոխարինում ներառյալ թերմոժապավենը (HP/Canon/ Samsung/Xerox/Lexmark/Pantum	7 000

կամ համարժեք)	
Լազերային տպիչների վառարանի տեֆլոնե լիսեռի փոխարինում ներառյալ տեֆլոնե ռետինե լիսեռ (Samsung/Xerox/Lexmark/Pantum կամ համարժեք)	9 000
Լազերային տպիչների վառարանի ռետինե լիսեռի փոխարինում ներառյալ Վառարանի ռետինե լիսեռը (HP/Canon/Samsung/Xerox/Lexmark/Pantum կամ համարժեք)	8 500
Լազերային տպիչների վառարանի ջերմատաքցուցիչի փոխարինում ներառյալ Վառարանի ջերմատաքացուցիչը (HP/Canon/Samsung/Xerox/Lexmark/Pantum կամ համարժեք)	11 000
Լազերային տպիչների լազերի փոխարինում ներառյալ լազերը (HP/Canon/Samsung/Xerox/Lexmark/Pantum կամ համարժեք)	18 000
Մայրական սալիկի փոխարինում ներառյալ Մայրական սալիկը	20 000
Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում ներառյալ Թղթի մատուցման ռետինե լիսեռ(HP/Canon/Samsung/Xerox/Lexmark/Pantum) կամ համարժեք	4 000
Թղթի արգելակման դաշտի փոխարինում ներառյալ արգելակման դաշտը (HP/Canon/Samsung/Xerox/Lexmark/Pantum) կամ համարժեք	2 500
Սկանավորող բլոկի փոխարինում ներառյալ բլոկը A4 կամ A3	14 000
Պատճենահանող սարքի	
Դիագնոստիկա , պրոֆիլակտիկա սև կամ գունավոր	8 000
Վերանորոգում սև կամ գունավոր (ներառյալ պահեստամասերը՝ տպասալ, ատամնանիվ, ջերմատաքացուցիչ, մեխանիկական դետալներ) չվերանորոգման դեպքում փոխարինում նորով	12 000
Լիցքավորում պատճենահանման սարքի ներառյալ տոները Canon NP7161 / iR2016 / iR2230 կամ համարժեքը	6 000
Պատճենահանման սարքի քարթրիջի թմբուկի փոխարինում ներառյալ թմբուկը Canon NP7161 / iR2016 / iR2230 կամ համարժեքը	9 500
Պատճենահանման սարքի քարթրիջի կարատրոնի փոխարինում ներառյալ կարատրոնը Canon NP7161 / iR2016 / iR2230 կամ համարժեքը	6 000
Պատճենահանման սարքի քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում ներառյալ մագնիսական լիսեռը Canon NP7161 / iR2016 / iR2230 կամ համարժեք	6 000
Պատճենահանման սարքի քարթրիջի չափիչ դանակի փոխարինում ներառյալ չափիչ դանակը Canon NP7161 / iR2016 / iR2230 կամ համարժեք	5 600
Պատճենահանման սարքի քարթրիջի մաքրող դանակի փոխարինում ներառյալ մաքրող դանակը Canon NP7161 / iR2016 / iR2230 կամ համարժեք	7 000
Պատճենահանման սարքիվառարանի թերմոժապավենի փոխարինում ներառյալ վառարանի թերմոժապավենը Canon NP7161 / iR2016 / iR2230 կամ համարժեք	14 000
Պատճենահանման սարքի վառարանի թերմոժապավենի փոխարինում ներառյալ վառարանի թերմոժապավենը Canon NP7161 / iR2016 / iR2230 կամ համարժեք	16 000
Պատճենահանման սարքի վառարանի ջերմատաքացուցիչի փոխարինում ներառյալ ջերմատաքացուցիչը Canon NP7161 / iR2016 / iR2230 կամ համարժեք	22 000
Պատճենահանման սարքի վառարանի լազերի փոխարինում ներառյալ լազերը Canon NP7161 / iR2016 / iR2230 կամ համարժեք	20 000
Պատճենահանման սարքի սկաների բլոկի փոխարինում ներառյալ կաների բլոկը Canon NP7161 / iR2016 / iR2230 կամ համարժեք	18 000
Պատճենահանման սարքի թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում ներառյալ ռետինե գլանը Canon NP7161 / iR2016 / iR2230 կամ համարժեք	5 000
Պատճենահանման սարքի Մայրական տպասալի փոխարինում ներառյալ մայրական տպասալը Canon NP7161 / iR2016 / iR2230 կամ համարժեք	20 000

Պատճենահանման սարքի թղթի մատուցման արգելակման դաշտի փոխարինում ներառյալ արգելակման դաշտը Canon NP7161 / iR2016 / iR2230 կամ համարժեք	6 000
Ընդամենը */ մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարը/*	**757 400**
Ընդամենը */ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինը/*	**605 920**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների
նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02815457
ՀՀ 900011018513
գլխավոր քարտուղար
Հ. Բատիկյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<Մանվել Ջալավյան>> Ա/Ձ
ՀՀ, Ք.Երևան Նոր նորք Գալշոյան փ 19շ 12բն
Գործ. հասցե ք. Երևան Մոսկովյան 25 3/1տ.
«Ինեկո բանկ» ՓԲԸ
ՀՀ 2050032155921001
ՀՎՀՀ 82934656
տնօրեն՝
Մ. Ջալավյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«19» «02» 2021թ. կնքված
ՏԿԵՆ-ՄԱ-ԾՁԲ-2021/7Ծ ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50531200/1	Էլեկտրական սարքերի, սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայություններ	-	35 000	35 000	122 500	122 500	122 500	210 000	210 000	210 000	350 000	350 000	350 000	**350 000**

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:
** Վճարումներն իրականացվելու են փաստացի մատուցված ծառայությունների չափով՝ Կատարողի կողմից հաստատված և ներկայացված հաշիվ-ապրանքագրերի և հաստատված ընդունման-հանձնման արձանագրությունների հիման վրա:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02815457
ՀՀ 900011018513
գլխավոր քարտուղար
Հ. Բատիկյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<Մանվել Ջալավյան>> Ա/Ձ
ՀՀ, Ք.Երևան Նոր նորք Գալշոյան փ 19շ 12բն
Գործ. հասցե ք. Երևան Մոսկովյան 25 3/1տ.
«Ինեկո բանկ» ՓԲԸ
ՀՀ 2050032155921001
ՀՎՀՀ 82934656
տնօրեն՝
Մ. Ջալավյան

/ստորագրություն/
Կ.Տ